ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» Նոյեմբերի 2024թ. ՆՄՈ/536-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2024 թվականի նոյեմբերի 04-ի N08-1045/1049 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արյան փոխներարկման կայան» պետական փակ բաժնետիրական ընկերության և ««Էջմիածին» բժշկական կենտրոն», «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն», «Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական

ընկերությունների 2019 թվականի պետական բյուջե վճարվող շահաբաժինների չափերի հաստատման մասին» ՆՄՈ/213-2020 որոշման՝

1) նախաբանում «67-րդ հոդվածի առաջին մասի «ժբ» ենթակետով» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի 13 կետով» բառերով.

2) հավելվածի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն՝

Ընդամենը զուտ շահույթ՝ 2822.1 հազար դրամ

ա) Շահաբաժին —1891,1 հազ դրամ

բ) Պահուստային կապիտալ —141 1 հազ դրամ

գ) Միասնական բազմանպատակային հիմնադրամ— 789,9 հազ դրամ:»:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն», «Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների 2020 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջե վճարվող շահաբաժինների չափերի հաստատման մասին» ՆՄՈ/219-2021 որոշման՝

1) նախաբանում «67-րդ հոդվածի առաջին մասի «ժբ» ենթակետով» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի 13 կետով» բառերով.

2) հավելվածի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն՝

Ընդամենը զուտ շահույթ՝ 4807,9 հազար դրամ

ա) Շահաբաժին — 3484,4 հազ՝ դրամ

բ) Պահուստային կապիտալ — 240,4 հազ՝ դրամ

գ) Միասնական բազմանպատակային հիմնադրամ— 1083,1 հազ՝ դրամ:»:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Մեծամորի բժշկական կենտրոն», «Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների, «Վաղարշապատի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե վճարվող շահաբաժինների չափերի հաստատման մասին» ՆՄՈ/457-2022 որոշման՝

1) վերնագրում «պետական փակ բաժնետիրական ընկերության» բառերից հետո լրացնել «և «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության» բառերով.

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով՝

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն՝

Ընդամենը զուտ շահույթ՝ 76017,2 հազար դրամ

ա) Շահաբաժին —38567,3 հազ՝ դրամ

բ) Պահուստային կապիտալ —3800,9 հազ՝ դրամ

գ) Միասնական բազմանպատակային հիմնադրամ— 33649,0 հազ՝ դրամ:»:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի

տնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե վճարվող շահաբաժնի չափի հաստատման մասին» NՄՈ/264-2024 որոշման՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Էջմիածնի բժշկական կենտրոն» և «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների 2023 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե վճարվող շահաբաժինների չափերի հաստատման մասին».

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով՝

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն՝

Ընդամենը վնաս՝ 534,2 - հազար դրամ

ա) Շահաբաժին--1860,1 հազ□ դրամ:»:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-11-13 16:28:01 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ□ ԽՈՒԴԱԹՅԱՆ**